ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

մագիստրոսի կրթական ծրագիր

Ցանկանու՞մ եք դառնալ «Կրթության կառավարում» կրթական ծրագրի շրջանավարտ, ունենալ հնարավորություն աշխատելու հանրային և մասնավոր կրթական հաստատություններում, կրթական ծառայություններ մատուցող ընկերություններում, պետական կառույցներում և կրթական ոլորտի այլ կազմակերպություններում, ապա շտապեք ՀՊՄՀ՝ սովորելու «Կրթության կառավարում» մագիստրոսական ծրագրով:

Դուք ձեռք կբերեք խորը գիտելիքներ՝ ներկայիս կրթական համակարգի կառավարման խնդիրների ու մարտահրավերների, դրանց լուծման ուղիների և մեթոդների վերաբերյալ:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում դասավանդում են լավագույն մասնագետներ. պարբերաբար վերանայվում են կրթական ծրագրերը, որոնք համապատասխանեցվում են գործատուների պահանջներին և միջազգային չափանիշներին:

Ի դեպ, կրթական այս ծրագիրը մշակվել և մեկնարկել է Մեծ Բրիտանիայի Միդլսեքս և Բաֆ Սպա համալսարանների հետ երկարատև համագործակցության շրջանակում:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնը նաև իրականացրել է պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացման ծրագիր, որի նպատակն է ծանոթանալ դասավանդման և ուսամնառության նոր մեթոդներին, ուսանողների գիտելիքների գնահատման բազմաբաղադրիչային համակարգին, հետազոտության իրականացման արդի մոտեցումներին:

Կրթական ծրագիրն առանցքային է համարում մասնագիտական գիտելիքների ձևավորումը, մասնագիտական ու փոխանցելի հմտությունների զարգացումը, որոնք ձևավորվում են հետևյալ առարկաների շրջանակում՝ «Ռազմավարական որոշումների կայացում», «Մասնագիտական էթիկա», «Ստեղծագործական մտածողություն», «Գործառնական կառավարում», «Մարդկային ռեսուրսների և ֆինանսների կառավարում», «Կոնֆլիկտների կառավարում», «Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի ուսումնասիրություն», «Բարեփոխումների իրականացման ռազմավարություն», «Կրթական ոլորտում գործընթացների կազմակերպում» և այլն:

«Կրթության կառավարում» ծրագրի շրջանակում մասնագիտական պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն զարգացնելու գործնական ունակությունները, ստանալ համապատասխան գիտելիքներ և կարողություններ՝ հետազոտական աշխատանք կատարելու և այդ ներուժը կիրառելու նպատակով:

Ուսման վարձ

011102.05.7 Կրթության կառավարում մագիստրոսական կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ ուսման տարեկան վարձավճարը՝ 430 000 ՀՀ դրամ է:

Ընդունելություն

Ընդունելությունն իրականացվում է հարցազրուցի միջոցով: Ընդունելության կարգին և հարցաշարին կարող եք ծանոթանալ www.aspu.am կայքի ԴԻՄՈՐԴ բաժնում. լրացուցիչ տեղեկությունների համար գրել՝ ecoteach09@aspu.am կամ զանգահարել՝ +374 (010) 59-70-39 :